

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԳՈՅԱԿԱՆԻ ԱՌԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ
ՓՈԽԱՐԻՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ
ՖՐԱՆՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Լեզվին հատուկ է ներքին (քերականական) զուգաձևությունների առկայությունը, որը թույլ է տալիս լեզվական միավորներին արդյունավետ գործառնել այլ գործառույթով միավորների փոխարեն: Այսպես օրինակ՝ հայերեն լեզվի զարգացման ընթացքում -ս, -դ, ը/ն հոդերը ունեցել են հետևյալ գործառույթները՝ որոշյալություն, դիմորոշություն, ցուցականություն և ստացականություն: Դա թույլ է տվել. 1) զուգահեռաբար գործառնել անձնական դերանունների հետ և փոխարինել դրանց, ինչպես օրինակ՝ Եթե որդիակ իմ ես, *հորս* նմանեա¹ (որտեղ խոսողը հայրն է և նկատի ունի իրեն), 2) զուգահեռաբար գործառնել ցուցական դերանունների հետ և փոխարինել դրանց, օրինակ՝ Ոչ է իմ *բանս*, այլ Պաւղոսի, միաժամանակ ցուցական հոդերը, ցուցական դերանունների պես, նշելով այս կամ այն առարկան, կարող էին մատնանշել նաև նրա տարածական դիրքը երեք դեմքերից մեկի հարաբերությամբ, օրինակ՝ Թե մեղից ես *որդույդ* իմում, սպանից եւ ես *զորդիդ* քո (խոսողի և խոսակցի որդիները գտնվում են խոսակցի մոտ), 3) զուգահեռաբար գործառնել անձնական դերանունների սեռական հոլովածի հետ և փոխարինել դրան, օրինակ՝ Բայց հետագայում որքան եղավ մախ *զարմանքս*, հետո *զայրույթս* և, ի վերջո, *հուսահատությունս*, երբ իրար հետևից գրած *մամականերիս* և *հեռագրերիս* և ո՛չ մեկի պատասխանը չստացա (Նար-Դոս):

¹ Գրաբարի օրինակները վերցրած են Յ. Туманян, «Артикли в современном армянском языке» գրքից, М.-Է., 1963, էջեր 41, 44, 48:

Լեզվում առկա այսպիսի զուգահեռ ձևերը Ն. Պառնասյանն անվանում է ձևաբանական և բառաքերականական համանիշներ: «Համանիշների բնորոշման համար,- նշում է Պառնասյանը,- խիստ կարևոր է այն հանգամանքը, որ բոլոր դեպքերում նրանք մատնանշում են նույն հատկանիշը, առարկան, առարկայական հարաբերությունը և այլն: Դա էլ հենց այն ընդհանուրն է, որ ընկած է համանիշների հիմքում և նրանց միավորում է մեկ խմբի մեջ: Համանիշները տարբերվում են իրարից միայն իմաստային ու ոճական - կիրառական նուրբ երանգներով, ինչպես նաև հատկանիշի դրսևորման որոշ աստիճանակարգումով»²: Այդուհանդերձ, դրանք համոզես են գալիս որպես քերականական համարժեքներ և փոխարինում են միմյանց առանց որևէ նախապայմանի:

Գոյականի առկայացման կարգը գերծ չէ զուգածություններից: Առկայացուցիչները ևս կարող են ունենալ գործառույթով զուգահեռ ձևեր: Դրանց զուգածության նախապայմանը, սակայն, համատեքստն է. «Լեզվի միավորը,- գրում է Ի. Կուլիկովան,- հայտնվելով համատեքստում, դառնում է նրա մասը: Որպես համատեքստի տարր, այդ միավորը մյուս համատեքստային միավորների հետ միասին իրականացնում է լեզվական համակարգը և արտահայտում է կոնկրետ իմաստ: Հետևաբար՝ լեզվական միավորը և համատեքստը փոխկապակցված են: *Համատեքստում կարող են իրականանալ արդեն գոյություն ունեցող միավորներ՝ իրենց իմաստներով, կարող են առաջանալ նոր միավորներ և նոր իմաստներ* (ընդգծումը մերն է - Ա.Բ.)»³: Վ. Գակը այս առնչությամբ նշում է. «Խոսքում քերականական ձևի առկայացման ժամանակ իրականանում է նրա իմաստներից մեկը, եթե ձևը բազմիմաստ է. բացի դրանից համատեքստում այն կարող է ստանալ լրացուցիչ իմաստային երանգներ, քանի որ առկայանում է նշվող երևույթի հնարավոր հատկանիշներն

² Ն. Պառնասյան, Ձևաբանական և բառաքերականական համանիշները ժամանակակից հայերենում, «Հայոց լեզվի կառուցվածքը» գրքում, Ե., 1975, էջ 110:

³ И. Куликова, Сочетание слов как минимальный контекст лексического значения слова, в кн. "Языковые единицы и контекст", Л., 1973, стр. 20.

արտահայտող պոտենցիալ նշանակը (սեման)»⁴:

Տարբեր առկայացուցիչներ կարող են հանդես գալ որպես միմյանց փոխարինողներ, բայց քանի որ դրանց քերականական իմաստները համարժեք չեն միմյանց, ապա համատեքստից դուրս դրանք որպես զուգահեռ ձևեր չեն կարող հանդես գալ: Իսկ «քերականական իմաստ ասելով,- նշում է ակադեմիկոս Գ. Ջահուկյանը,- պետք է հասկանալ մի դեպքում քերականական հատկանշի, մյուս դեպքում՝ քերականական հարաբերության իմաստ: Առաջինը կապված է հարացույցի, երկրորդը՝ շարակարգի հետ. հետևաբար առաջինն առնվում է կոնտեքստից դուրս, երկրորդը՝ կոնտեքստում: Առաջինը ոչ այլ ինչ է, եթե ոչ անփոփոխակ, որ բնորոշվում է էական հատկանշով, երկրորդը կարող է փոխակերպվել ըստ տեքստի ընդհանուր («ոճական») և անմիջական («դիրքային») առանձնահատկությունների. այս դեպքում մենք գործ կունենանք տվյալ անփոփոխակի «ոճական» (ազատ) և «դիրքային» տարբերակների հետ»⁵: Սակայն «կոնտեքստի մեջ հանդես եկող դիրքային տարբերակների արտահայտած իմաստային երանգների (առումների) մեջ էլ,- նշում է Ջահուկյանը,- պետք է տարբերել հիմնական կիրառությունը (հարաբերությունը), որ ամենից ավելի է բնորոշ արտակոնտեքստային իմաստի համար, միավորի երկրորդական կիրառություններից»⁶: Այս իմաստով, դիրքային տարբերակների հիմնական իմաստային երանգները կամ առումները, ինչպես դրանք անվանում է Ջահուկյանը, ակնհայտ են այնքանով, որ դրանք մշտապես արտահայտվում են հենց այդ տարբերակներով, իսկ լրացուցիչ երանգներն արդեն պայմանավորված են համատեքստով, և համատեքստում է որոշվում հիմնական և լրացուցիչ իմաստների ծավալային փոխհարաբերությունը: Ռեստի այս դեպքում կարելի է խոսել միայն համատեքստային համանիշության (այնպես, ինչպես այս տերմինը բացատրում է Պառնասյանը) մասին, այդ իսկ պատճառով նախընտրելի ենք համարում համատեքստային փոխարինելիություն տերմինը:

⁴ В.Г.Гак, Теоретическая грамматика французского языка, М., Добросвет, 2000, стр. 47.

⁵ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969, էջ 105:

⁶ նույն տեղում:

Ֆրանսերենում և հայերենում գոյականի առկայացուցիչները որպես քերականական երևույթ ունեն զուգահեռ ձևեր, որոնք բաշխվում են հետևյալ կերպով. 1) գոյականի հիմնական առկայացուցիչը հոդը, ընդհանրացնող գործառնություն զուգահեռ ձևեր ունի հենց իր ձևի ներսում՝ որոշյալ հոդը փոխարինվում է անորոշով կամ ընդհակառակը, 2) որոշյալ հոդը, ծագելով ցուցական դերանունից, զուգահեռ կիրառություններ է ունենում դրա հետ, 3) որոշյալ հոդը որոշ կիրառություններում արտահայտում է ստացականություն փոխարինելով ֆրանսերենի ստացական ածականների, հայերենի անձնական դերանվան սեռական հոլովածին 4) ցուցական ածականները (ֆրանսերենում) և ցուցական դերանունները (հայերենում) զուգահեռություններ են դրսևորում համապատասխանաբար ստացական ածականների և անձնական դերանունների սեռական հոլովի հետ:

1) *Որոշյալ և անորոշ հոդերի փոխարինելիությունը*. Ֆրանսերեն լեզվում որոշյալ և անորոշ հոդերը փոխարինում են միմյանց իրենց ընդհանրացնող գործառնությամբ: «Ժամանակակից ֆրանսերեն լեզվի Լառուս քերականություն»-ը նշում է, որ ընդհանրացնող որոշյալ հոդը արտահայտում է պատկանելություն որևէ մի տեսակի, ինչպես՝ *Le verre n'est jamais si bleu qu'à sa brisure* (Ապակին երբեք այնքան կապույտ չէ, որքան կոտրվելուց հետո), իսկ ընդհանրացնող անորոշ հոդը հանդես է գալիս որպես հանրահայտ ճշմարտության յուրատեսակ մի դրսևորման արտահայտիչ, ինչպես՝ *Un soldat français ignore la fatigue* (Ֆրանսիական զինվորին անձանոթ է հոգնությունը)⁷: Է. Թումանյանը նշում է, որ ընդհանրացնող հոդը ենթադրում է ասության (*высказывание*) վերաբերությունը տվյալ առարկայի ամբողջ դասին, այդ պատճառով ընդհանրացնող հոդը գոյականի որոշյալությունը արտահայտելու սահմաններից դուրս է⁸: Ինչ վերաբերում է որոշյալ հոդի՝ որևէ մի տեսակին կամ դասին պատկանելությունը ցույց տալուն, ապա կարելի է

⁷ *Stu Grammaire Larousse du français contemporain*, Paris, 1981, էջ 217-218:

⁸ Զ. Туманян, նշվ. աշխ., էջ 124:

ասել, որ դա ընդհանրացնող որոշյալ հոդի կիրառություններից մեկն է. 4. Գալը այդ կիրառությունից բացի տարբերում է նաև ընդհանրացնող հոդի չտարորոշված ամբողջությունը նշելու կիրառությունը. ինչպես՝ *pêcher le poisson* (ծուկ որսալ)⁹, իսկ առհասարակ, որոշյալ հոդը այս գործառնությով հանդես է գալիս ընդհանուր դատողություն արտահայտող նախադասություններում, երբ հասկացությունը ռեֆերենտ կամ դեմոտատ չունի: Այսպես՝ Ս. Լեշչենկոն որոշյալության-անորոշության և ընդհանրացման կարգերի արտահայտման տեսանկյունից տարբերում է ասության երեք տեսակ՝ որոշյալ, անորոշ և ընդհանրացնող ասություններ, վերջին տեսակի մեջ նա մտցնում է. ա) ընդհանրացում, որն արտահայտում է առարկաների ողջ դասը, որի հետևանքով անհատականացնող վերաբերություն (*референтность*) տեղի չի ունենում, գոյականը այս դեպքում «ծնակերպվում է ընդհանրացնող իմաստ ունեցող որոշյալ և անորոշ հոդերով», օրինակ՝ *L'homme est pêcheur par sa nature* (Մարդը մեղավոր է իր էությամբ), *Un enfant de cinq jours ne se débat guère* (Հինգ օրեկան երեխան բնավ չի ընդդիմանում), բ) ընդհանրացում, որն արտահայտում է վերացարկված հասկացություն իր ողջ ծավալով, որը վերաբերություն չունի որևէ կոնկրետ իրավիճակի հետ, այդ պատճառով «ծնակերպվում է ընդհանրացնող որոշյալ հոդով», ինչպես՝ *La pensée vivante veut des nourritures vivantes et présentes* (Կենդանի միտքը կենդանի և իրական սնունդ է ուզում)¹⁰: Ընդհանրացումը, ըստ Գալի, միշտ կապված է առկայացման թուլացման հետ¹¹: Ստորև տանք մի քանի օրինակ ընդհանրացնող որոշյալ հոդով.

(1) *Le loup est un carnassier.*

Գայլը գիշատիչ է (պատկանելություն տեսակին):

(2) *L'homme est gouverné par l'Esprit* (A. de Saint-Exupéry).

⁹ Տե՛ս В.Г.Гак, *Ոշվ. աշխ.*, էջ 188:

¹⁰ Տե՛ս М.И.Лещенко, *Виртуальные и актуальные аспекты предложения*, Минск, 1988, էջ 74-76:

¹¹ Տե՛ս В.Г.Гак, *Ոշվ. աշխ.*, էջ 188:

Մարդուն ղեկավարող ուժը *Ոգին է* (Ա. դը Սենտ-Էքզյուպերի):

(3) *La vie crée l'ordre, mais l'ordre ne crée pas la vie (Idem).*

Կյանքը կարգուկանոն է ստեղծում, բայց *կարգուկանոնը* կյանք չի ստեղծում:

Օրինակներ ընդհանրացնող անորոշ հոդով.

(4) *Un homme sage est au-dessus de toutes les injures qu'on lui peut dire (Molière).*

Խելացի մարդը վեր է իրեն ուղղված ամեն տեսակի վիրավորանքից:

(5) *Une civilisation se fonde d'abord dans la substance (A. de Saint-Exupéry).*

Քաղաքակրթությունը նախ և առաջ հենվում է էության վրա (Ա. դը Սենտ-Էքզյուպերի):

(6) *Toujours un berceau attire les femmes... (F. Mauriac).*

Օրորոցը միշտ էլ ձգում է կանանց... (Ֆ. Մորիակ):

Պետք է ասել, որ ֆրանսերենի որոշյալ և անորոշ հոդերի փոխարինելիությունը ընդհանրացնող գործառույթում ավելի ազատ է համատեքստից, և վերը բերված օրինակներից յուրաքանչյուրում դրանք ազատորեն կարող են փոխարինել միմյանց: Սիսվապի

(1 ա) *Un loup est un carnassier.* Գայլը գիշատիչ է:

(2 ա) *Un homme est gouverné par l'Esprit.* Մարդուն ղեկավարող ուժը *Ոգին է*:

(2 բ) **Un homme est gouverné par un Esprit.*

(3 ա) *Une vie crée un ordre, mais un ordre ne crée pas de vie.* Կյանքը կարգուկանոն է ստեղծում, բայց *կարգուկանոնը* կյանք չի ստեղծում:

(3 բ) **Une vie crée l'ordre, mais un ordre ne crée pas la vie.*

(3 գ) *La vie crée un ordre, mais l'ordre ne crée pas de vie.*

(4 ա) *L'homme sage est au-dessus de toutes les injures qu'on lui peut dire.*

Խելացի մարդը վեր է իրեն ուղղված ամեն տեսակի վիրավորանքից:

(5 ա) *La civilisation se fonde d'abord dans la substance.* Քաղաքակրթությունը նախ և առաջ հենվում է էության վրա:

(6 ա) *Toujours le berceau attire les femmes...* Օրորոցը միշտ էլ ձգում է կանանց...

Սահմանափակում առկա է միայն (2 բ) և (3 բ) օրինակներում: Ընդհանուր հասկացություն արտահայտող գոյականը ֆրանսերենում կարող է հանդես գալ ինչպես ենթակայի, այնպես էլ խնդրի պաշտոնում (տե՛ս 3-րդ օրինակը), թեև, ինչպես նշում է Գակը, ենթակայի դիրքում ընդհանրացումը առավել հաճախ արտահայտվում է որոշյալ հոդով, խնդրի դեպքում՝ անորոշ հոդով¹²:

Պետք է հպանցիկ նշել ֆրանսերենում առկա ևս երկու պահ: Առաջին՝ ժխտական նախադասություններում ուղիղ խնդիր-գոյականից առաջ անորոշ հոդը փոխարինվում է *de* նախդիրով, որն արտահայտում է անորոշ հոդի իմաստ: Այդ նախդիրը ժխտական նախադասություններում փոխանցում է նաև ընդհանրացնող իմաստ, ինչպես (3 ա) և (3 գ) օրինակներում:

Երկրորդ՝ ֆրանսերենում հոգերի հոգնակի թիվն ընդհանրացնող գործառնություն միանշանակորեն չի դրսևորվում: Հոգնակի անորոշ հոդը մատնանշում է առանձին, չտարրորոշված առարկաների հոգնակիություն, ինչով և խոչընդոտվում է նրա ընդհանրացում արտահայտելը: Հոգնակի որոշյալ հոդը արտահայտում է տարրորոշված առարկաների ամբողջություն, որը մոտ է ընդհանրացման (տե՛ս (6 ա) օրինակը, որտեղ «*femmes*» գոյականը հանդես է գալիս ընդհանրացնող հոգնակի որոշյալ հոդով): Եթե այդ օրինակում ընդհանրացնող հոգնակի որոշյալ հոդը փոխարինենք անորոշով, ապա խոսքը կվերաբերվի ոչ թե ընդհանրապես կանանց, այլ՝ որոշակի թվով առանձին կանանց՝ *Toujours le berceau attire des femmes*:

Հայերենում ընդհանրացնող ազատ կիրառություն ունի միայն որոշյալ հոդը, դա շատ լավ երևում է տրված օրինակների թարգմանությունից: Ֆրանսերենի ընդհանրացնող անորոշ հոդի կիրառումը, այս տեսակետից, ավելի մոտ է գրաբարի ընդհանուր հասկացություն արտահայտող գոյականի անհոդ հանդես գալու երևույթին, ինչպես՝ Հավատարիմ է շուն (Շուն կենդանին հավատարիմ է)¹³:

¹² Տե՛ս B. Դ. Դաք, *Ուշվ. աշխ.*, էջ 188:

¹³ Օրինակը վերցրած է Գ. Զահուկյանի *Ուշված գրքից*, էջ 186:

Ժամանակակից հայերենում ընդհանուր հասկացություն արտահայտող անորոշ հոդով գոյականը, որպես կանոն, չի կարող հանդես գալ նախադասության ենթակայի պաշտոնում, չի կարելի ասել, օրինակ, (մի) Մարդ մահկանացու է կամ (մի) Գայլ գիշատիչ է: Այդ կանոնից դուրս են, սակայն, սահմանափակ թվով արտահայտություններ, որոնք ավելի բնորոշ են խոսակցական լեզվին, ինչպես՝ Մարդ չի իմանում ինչ անի, Մարդ պիտի ազնիվ լինի և այլն: Այս կարգի նախադասություններում ընդհանրացումը հասցվում է բարձրագույն աստիճանի, այդ է պատճառը, որ ֆրանսերենում այսպիսի ընդհանրացումը ունի արտահայտման հատուկ ձև՝ օտ անորոշ դերանունը, ինչպես՝ *On ne sait pas quoi faire*: Ընդհանրացնող անորոշ հոդը Ø ձևով կարող է ենթակա-գոյականի հետ հանդես գալ նաև էքզիստենցիալ նախադասություններում, երբ խոսքը առարկայի կամ երևույթի լինել-չլինելու մասին է, ինչպես՝ Արդարություն չկա, Եղբայրների միջև թշնամություն չի լինում, Մարդասիրություն դեռ մնացել է և այլն և հավանականություն արտահայտող նախադասություններում, ինչպես՝ Զյուր կգա, Քամի պիտի բարձրանա և այլն: Դրան հակառակ, անորոշ հոդը Ø ձևով ինչպես իր ընդհանրացնող, այնպես էլ մասնավորեցնող գործառույթներով կարող է ազատորեն հանդես գալ խնդիր-գոյականի հետ, ինչպես դա երևում է 3-րդ օրինակի թարգմանությունից. հմմտ.՝ Կյանքը *կարգուկանոն* է ստեղծում, բայց *կարգուկանոնը կյանք* չի ստեղծում (ընդհանրացնող Ø հոդ) և Վահանը *նկար* է *նկարում* (մասնավորեցնող անորոշ Ø հոդ՝ (մի) *նկար*, որ Վահանն է *նկարում*): Ընդհանրացնող գործառույթում հայերենի անորոշ հոդի գործառույթային սահմանափակությունը մասամբ փոխհատուցվում է այլ միջոցներով: Այդ միջոցներից է, օրինակ, -ս հոդի ընդհանրացնող գործառույթը: Է. Թումանյանը *նշում* է , որ որոշակի թվով բառերի հետ *ս* հոդը հանդես է գալիս որպես ընդհանրացնող հոդ, որն արտահայտում է դասը՝ ամբողջությամբ վերցրած: Որպես օրինակ է. Թումանյանը տալիս է հետևյալ նախադասությունը Նար-Դոսի «Մահը» վեպից. Ինչպես կարելի է ծանծրանալ մի բանից, որը միայն մի անգամ է տրվում մարդուս: Ըստ է. Թումանյանի, *ս* հոդն այս նախադասության մեջ «մարդ» գոյականի հետ հանդես է գալիս որպես ընդհանրացնող հոդ՝ ընդհանրացնելով այդ գոյականը «ընդհանրապես բոլոր մարդիկ և յուրաքանչյուր մարդ»

իմաստով¹⁴: Սահմանափակ կիրառություններում ընդհանրացնող հոդի գործառնություն կարող է հանդես գալ մաև -*դ* հոդը. օրինակ՝ Այդպես է լինում միշտ. *սիրույդ* առարկան կրկնակի սիրելի է թվում նրան կորցնելուց հետո (Նար-Ղոս): Այս նախադասության մեջ -*դ* հոդը մատնանշում է ոչ թե խոսակցի սիրո առարկան, քանի որ այստեղ խոսակից ընդհանրապես չկա, ուղղակի հերոսը մտորում է միայնակ, այլ՝ ընդհանրապես այն բոլոր մարդկանց սիրո առարկան, ովքեր կորցրել են նրան:

2) *Ցուցական ածականների (ֆրանսերենում) և ցուցական դերանունների (հայերենում) փոխարինելիությունը որոշյալ հոդով*. Ծագումնաբանորեն կապված լինելով ցուցական ածականների/դերանունների հետ՝ որոշյալ հոդը ունակ է փոխարինել առաջիններին իրենց հարակրկնական (անաֆորային) և ցուցայնական (դեյկտիկ) գործառնությային ոլորտներում: Հոդերի կիրառությունը ցուցական գործառնությով իրականանում է հետևյալ շարակարգային պայմաններում. ա) ցուցական ածական/դերանուն+գոյական կամ անվանական խումբ=որոշիչ հոդ+գոյական¹⁵ կամ անվանական խումբ, որ(ը) ... (ստորադասական նախադասություն): Սա որոշյալ հոդի ցուցայնական գործառնության ոլորտն է¹⁶: բ) ցուցական ածական/դերանուն+գոյական կամ անվանական խումբ=որոշյալ հոդ+գոյական կամ անվանական խումբ, սա որոշյալ հոդի հարակրկնական գործառնության ոլորտն է: Ասվածը պարզաբանենք հետևյալ օրինակներով.

¹⁴ Տե՛ս Զ. Կումարյան, նշվ. աշխ., էջ 47- 48:

¹⁵ Հայերենում գոյականին կարող է նախորդել *այն* դերանվանական որոշիչը, որը չպետք է շփոթել *այն* զուտ ցուցական դերանվան հետ, քանի որ այն զուրկ է ցուցականության գործառնությից (կամ շատ թույլ է արտահայտում այն), ունի հավելյալ (չեզոք) արժեք և կարող է մաև չկիրառվել: Դա ապացուցելու համար բավական է միայն բարդ ստորադասական նախադասությունը փոխակերպել պարզ ընդարձակի, որպեսզի այն չկիրառվի, հմմտ.՝ Ես չափեցի *այն* անդունդը, որն ընկած էր Ամնայի և այդ տղայի միջև և Ես չափեցի Ամնայի և այդ տղայի միջև ընկած անդունդը:

¹⁶ Նույն շարակարգային պայմաններում ֆրանսերենի որոշյալ հոդը կարող է ունենալ մաև հարակրկնական գործառնությ, եթե նախադասության բայը դրված է անցյալ ժամանակով, ինչպես՝ *ce livre=le livre que j'ai lu* (այդ գիրքը=գիրքը, որ ես կարդացել եմ):

(7) Thérèse, à cette époque, montait dans *la même calèche qui l'attend ce soir* (F. Mauriac).

Թերեզը նստում էր *այն նույն կառքը, որ այս երեկո դարձյալ սպասում էր նրան* (Ֆ. Մորիակ):

(8) Thérèse s'efforce d'imaginer *le premier regard qu'ils échangeront tout à l'heur (Idem)*.

Թերեզը փորձեց պատկերացնել *այն առաջին հայացքը, որ շուտով պետք է փոխանակեին իրենք*:

Եթե փորձենք այս երկու նախադասություններում որոշյալ հոդերը փոխարինել ցուցական ածականներով/դերանուններով և հանել նախադասության ստորադասական հատվածը, ապա կստացվի հետևյալը.

Thérèse, à cette époque, montait dans cette même calèche.

Թերեզը նստում էր այդ նույն կառքը:

Thérèse s'efforce d'imaginer ce premier regard.

Թերեզը փորձում է պատկերացնել այդ առաջին հայացքը:

Ստեղծվում է այնպիսի տպավորություն, թե այս նախադասությունները իմաստային տեսանկյունից անավարտ են, սակայն դրանք լիարժեք կընկալվեն այն դեպքում, երբ դրանցից առաջ որևէ տեղեկություն է տրվել *կառքի* և *հայացքի* մասին: Այդ դեպքում ցուցական ածականը/դերանունը կկիրառվի հարակրկնական գործառույթային ոլորտում: Այս նախադասությունները կարող են նաև ընկալվել որպես ցուցայնական, եթե օբյեկտը (դենոտատը) ուղղակիորեն տրված է խոսքի պահին և մոտ է խոսողին ժամանակային և տարածական առումով, այդ դեպքում ֆրանսերենի *ce* ցուցական ածականը կհամապատասխանի հայերենի *այս* ցուցական դերանվանը: Այսպիսով վերը բերված բնագիր օրինակներում որոշյալ հոդը կիրառված է ցուցական գործառույթով: Բերենք նաև երկրորդ տիպի օրինակներ.

(9) Une seule lettre d'Anne: *la petite* n'aimait guère écrire (F. Mauriac).

Աննայից միայն մի նամակ եկավ: *Այդ փոքրիկը* շատ չէր սիրում գրել (Ֆ. Մորիակ):

(10) Je mesurai d'un coup d'œil avec stupeur, cet abîme entre la passion d'Anne et l'indifférence *du garçon* (*Idem*).

Ապշահար, ես մի հայացքով չափեցի այն անդունդը, որ ընկած էր Աննայի և *այդ տղայի* միջև:

(11) Peut-être fîmes-nous cinq ou six promenades; je n'en isole que celle où nous nous occupâmes de rédiger ensemble la lettre pour Anne. *Le naïf garçon* s'arrêtait à des formules qu'il croyait apaisantes... (*Idem*).

Հավանաբար մենք միասին զբոսնեցինք մի հինգ-վեց անգամ: Բայց առանձնապես հիշում եմ այն զբոսանքը, երբ մենք զբաղված էինք Աննային ուղղված նամակը կազմելով: *Այդ միամիտ տղան* կանգ էր առնում այնպիսի ձևակերպումների վրա, որոնք նրան մեղմ էին թվում...

Ֆրանսերենի որոշյալ հոդը, լինելով «թուլացած հարակրկնական ցուցական դերանուն»¹⁷ առանց սահմանափակման գոյականը վերաբերում է նախընթաց հարաբերյալին (անտեցեղենտին): Հետևաբար՝ եթե ենթարկենք վերը բերված օրինակները նախորդ տիպի վերլուծության՝ ֆրանսերենի որոշյալ հոդը փոխարինելով ցուցական ածականով, ապա կտեսնենք, որ նախադասությունը դրանից իմաստային փոփոխություններ կամ կորուստներ չի կրի: Սհավասիկ՝

Une seule lettre d'Anne: *cette petite* n'aimait guère écrire.

Աննայից միայն մի նամակ եկավ: *Այդ փոքրիկը* շատ չէր սիրում գրել:

Je mesurai d'un coup d'œil avec stupeur, cet abîme entre la passion d'Anne et l'indifférence de *ce garçon*.

Ապշահար, ես մի հայացքով չափեցի այն անդունդը, որ ընկած էր Աննայի և *այդ տղայի* միջև:

Ի տարբերություն ֆրանսերենի հայերենին հատուկ է հարակրկնական ոլորտում ցուցական դերանվան պահպանումը: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ հայերենն ունի ազատ շարադասություն, և նախորդ

¹⁷ Տե՛ս Բ.Գ.Плютовский, Формирование артикаля в романских языках, М.- Л., 1960, էջ 10:

ճախադասության մեջ առկա մեկ կամ մի քանի գոյականների կամ ընդարձակ անվանական խմբի առկայության դեպքում հարակրկնական ցուցական դերանունը վերաբերական հարաբերություն է ստեղծում անհրաժեշտ գոյականի հետ կամ թույլ է տալիս մեկ գոյականով ամփոփել ճախորդող անվանական խումբը: Ասվածը պարզ երևում է հայերեն բնագրերից վերցրած օրինակներում.

(12) Գրո՞ղը տանի,- ի՞նչ հրաշալի , ի՞նչ պաշտելի աչքեր... Ինչպես կուզեի վրա ընկնել, համբույրներով ծածկել *այդ աչքերը* և կլանել նրանց արձակած կայծերը *այդ կայծերից* վառվելու համար... (Նար-Ղոս):

(13) Ինձ մոտ գտնվում էր «Վերջ Զայաստանի»-ի հին հրատարակության մի օրինակը փալաս դարձած կարտոնի կազմով, հնացած, դեղնած թերթերով: Նոր տարին մոտենում էր. չեմ իմանում ինչպես խելքիս փչեց *այդ գիրքը* նվիրեմ Զալլիին (*Idem*):

(14) Շատ ծանր էր նրա (դարբին Գևորգի) վիճակը, միայն ինքն էր տան աշխատողը, ամբողջ ընտանիքը նրա ծեռքին էր նայում: Զասած աղջիկ ուներ, հազնվել-կապնվել էր ուզում, հապա մյուս երեխանե՞րը, ուսումնարանի ծախսե՞րը...

Գևորգը ընկճված էր *այդ ծանրության* տակ (Ավ. Իսահակյան):

Այս ճախադասություններում ցուցական դերանվան բացակայության դեպքում միայն հոդը կամ հոլովական վերջավորությունը ի վիճակի չեն արտահայտելու հարակրկնական ցուցականություն, հակառակ դեպքում համատեքստային որոշ խզում կառաջանա ճախորդ և հաջորդ ճախադասությունների միջև, և պարզ չի լինի, թե խոսքը նույն *աչքերի, կայծերի, գրքի, ծանրության* մասին է, թե ոչ:

3) *Ստացական ածականների (ֆրանսերենում) և ստացական դերանունների (հայերենում) փոխարինելիությունը որոշյալ հոդով.* Ֆրանսերենում և հայերենում համատեքստային որոշակի պայմաններում ստացական ածականները/դերանունները կարող են փոխարինվել որոշյալ հոդով: Ա. Դոգան նշում է, որ ֆրանսերենը ստացական ածականի փոխարեն որոշյալ հոդ է կիրառում այն դեպքերում, երբ ստացական հարաբերությունը

կասկած չի հարուցում, հատկապես երբ խոսքը մարմնի մասերի մասին է, ինչպես՝ *J'ai mal au ventre* (Փորս ցավում է)¹⁸: Օրինակներ.

(15) Elle fermait *les yeux* aux souffles de la terre endormie... (F. Mauriac).

Քնաթաթախ...հողի շնչառությունը ըմբռնվեց լավ՝ նա փակում էր *աչքերը*... (Ֆ. Մորիակ):

(16) Elle secoua *la tête* et l'homme la dévorait *des yeux* (*Idem*).

Նա շարժեց *գլուխը*, իսկ կառավարող առաջվա պես *աչքը* չէր կտրում նրանից:

(17) Je vais suivre ... le traitement Fowler ... l'important est que je retrouve *l'appetit*... (*Idem*).

Ընդունելու են Ֆաուլերի կաթիլներ ... կարևորը՝ *ախորժակս* նորից բացվի...

(18) (La propriété est l'unique bien de ce monde; et rien ne vaut de vivre que de posséder la terre). Thérèse "qui avait la propriété dans *le sang*" eût voulu qu'avec ce cynisme la question fût posée... (*Idem*).

(Սեփականությունը այս աշխարհի միակ բարիքն է և, եթե հողին չես տիրում, չարժե ապրել): Թերեզը, որ «*արյան մեջ* էր կրում սեփականության ծգտումը, կցանկանար, որ այդ հարցը դրվեր ցինիկության չափ բացահայտ:

Այս երևույթի հիմքում ընկած է լեզվական տնտեսումը, այսինքն՝ գոյականը չի ստանում ստացական ածական, քանի որ համատեքստից պարզ է, թե ում է պատկանում օբյեկտ-դեմոտատը: Հողը, ստացականություն արտահայտելու համար, հարակրկնական հարաբերություն է հաստատում նախընթաց հարաբերյալի հետ, որը տվյալ օբյեկտին տիրողն է կամ այն ամբողջը, որի մասն է կազմում այդ օբյեկտը: Ինքնուրույն, առանց նախընթաց հարաբերյալի, հողը ստացականություն չի արտահայտում:

Հայերենում այս հարաբերությունն արտահայտվում է *-ս, -դ, -ը/ն* ստացական հոդերով: Խոսողը չի կարող ասել «*Գլուխը ցավում է*»՝ նկատի ունենալով իր գլուխը, նաև չի կարող նույն բանն ասել՝ նկատի ունենալով խոսակցի գլուխը, նա անհրաժեշտաբար պետք է կիրառի *-ս և -դ* ստացական հոդերը, որոնք արտահայտում են բուն ստացականություն, վերջինների համեմատությամբ ը/ն հոդի արտահայտած ստացականությունը շատ ավելի

¹⁸ Տե՛ս A. Dauzat, Grammaire raisonnée de la langue française, v. 1, Paris, 1958, էջ 274:

թույլ է. նրա ստացական իմաստը ճշգրտվում է համատեքստում, հարակրկնական ոլորտում գործառնելիս:

4) *Ստացական ածականի (ֆրանսերենում) և ստացական դերանվան (հայերենում) փոխարինելիությունը ցուցական ածականով/դերանվամբ. Ինչպես նախորդ, այնպես էլ այս դեպքում փոխարինող առկայացուցիչները հանդես են գալիս հարակրկնական գործառնության ոլորտում: Օրինակներ.*

(19) Et nous étions d'accord, entre amis... D'accord sur quoi ? ... Nous n'eussions pas su non plus, le dire. Mais *cet* [=notre] *accord* était si plein, si solidement établi en profondeur... (A. de Saint-Exupéry).

Եվ մենք ընկերներով համամիտ էինք: ... Համամիտ ինչի՞ն: Այդ մեկն էլ չէինք կարող ասել: ... Բայց *համերաշխությունը*¹⁹ [=մեր համերաշխությունն] այնքան լիարժեք էր, այնքան խորիմաստ... (Ա. դը Սենտ-Էքզյուպերի):

(20) Les hommes, un instant, observèrent la jeune femme immobile, serrée dans son manteau et *ce* [=son] *blême visage* qui n'exprimait rien (F. Mauriac).

Սի պահ երկու տղամարդիկ զննեցին անշարժ կանգնած, վերարկուի մեջ կծկված երիտասարդ կնոջը, *այդ* [=նրա] *ոչինչ չասող մեռելագույն դեմքը* (Ֆ. Մորիակ):

(21) Son père semblait enfin s'apercevoir qu'elle était là. Thérèse, d'un bref regard, scruta *ce* [=son] *visage sali de bile, ces* [=ses] *joues hérissées de durs poils d'un blanc jaune* que les lanternes éclairaient vivement (*Idem*).

Վերջապես հայրը, կարծես, նկատեց, որ ինքն այդտեղ էր: Թերեզը մի կարճ, քննող հայացք գցեց *լապտերների լույսով վառ լուսավորված նրա հողազույն դեմքին, դեղնասպիտակ, կոշտ ցցված մազերով այտերին:*

Օրինակներ հայերեն բնագրերից.

(22) ... Այժմ դարձել էի դատարանների կողմանցների կեղտոտ սեղանների վրա զանազան խնդրագրեր և կլյաուզաներ գրող, զանազան մութ գործեր պաշտպանող, միշտ արբած և միշտ քնատ մի աբլակատ՝ այդ զգվելի տիպի բոլոր բացասական հատկանիշներով: Եվ իմ ամբողջ տրագեդիան այն էր, որ ես

¹⁹ Հայերեն թարգմանության մեջ *այդ* ցուցական դերանունը բացակայում է:

լիովին զգում ու գիտակցում էի այդ [=իմ] սոսկալի անկումը, բայց ելնել այդ տիղմից անզոր էի... (Նար-Դոս):

(21) (Հուսալքումը նորից եկավ տիրեց ինձ նոր թափով...): Հոգեկան այդ դրությանը [=դրության] նորից հաջորդեց ծայրաստիճան անտարբերություն դեպի ամեն ինչ: Ուժեղ ցնցումներ էին պետք՝ ինձ այդ [=իմ] անտարբերությունից և անզգայությունից հանելու համար (*Idem*):

Ինչպես ֆրանսերենի ցուցական ածականը, այնպես էլ հայերենի ցուցական դերանունը, փոխարինելով համապատասխանաբար ստացական ածականին և անձնական դերանվան սեռական հոլովածին, խոսակիցների ընդհանուր տեսադաշտ են մտցնում որևէ մեկին կամ որևէ բանին պատկանող օբյեկտ-դեմոտատը՝ ուղղակիորեն խոսակիցների ուշադրությունը հրավիրելով դրա վրա, այս դեպքում շեշտվում է օբյեկտ-դեմոտատը: Մինչդեռ, երբ գոյականին նախորդում է ստացական ածական կամ անձնական դերանվան սեռական հոլովածը, ապա խոսակիցների ուշադրության կենտրոնում նախ այն անձը կամ առարկան է, որին պատկանում է օբյեկտ-դեմոտատը, ապա և՛ օբյեկտ-դեմոտատը, այս դեպքում շեշտվում է վերջինին տիրողը: Ահա սա է այն իմաստային նրբերանգը, որը տարբերում է այդ երկու առկայացուցիչներն իրարից:

Ֆրանսերենում հոդերի և ցուցաստացական ածականների միաժամանակյա գործառությունը գոյականի հետ խիստ կանոնակարգված է. հնարավոր է կա՛մ մեկի, կա՛մ մյուսի կիրառումը²⁰: Այսպիսի սահմանափակում հայերենը չունի, տարբեր առկայացուցիչների միաժամանակյա գործառությունը հայերենում հնարավոր է:

Վերը շարադրվածը կարելի է ամփոփել հետևյալ աղյուսակով.

²⁰ Այս մասին տե՛ս Ա. Մուրադյան, Ֆրանսերենի և հայերենի հոդերը, Բանբեր երևանի Համալսարանի, 1980, թիվ 2, էջ 171; B.Դ. Դաֆ, Գլվ. աշխ., էջ 160:

Լ.Եզու	Առկայա- ցուցիչ	Գործառույթ	Գործառության ոլորտ	Գործա- ռության սահմանա- փակում
Ֆրանսիերեն	անորոշ հոդ	ընդհանրացում	ենթակա-գոյական	-
			խնդիր-գոյական	-
	որոշյալ հոդ	ընդհանրացում	ենթակա-գոյական	-
			խնդիր-գոյական	-
	որոշյալ հոդ	ցուցականություն	ցուցայնություն	-
			հարակրկնություն	-
	որոշյալ հոդ	ստացականություն	ցուցայնություն	+
			հարակրկնություն	-
	ցուցական ածական	ստացականություն	ցուցայնություն	+
			հարակրկնություն	-
Քալեբերեն	անորոշ հոդ	ընդհանրացում	ենթակա-գոյական	+
			խնդիր-գոյական	-
	որոշյալ հոդ	ընդհանրացում	ենթակա-գոյական	-
			խնդիր-գոյական	-
	որոշյալ հոդ	ցուցականություն	ցուցայնություն	-
			հարակրկնություն	+
	որոշյալ հոդ	ստացականություն	ցուցայնություն	+
			հարակրկնություն	-
	ցուցական դերանուն	ստացականություն	ցուցայնություն	+
			հարակրկնություն	-

Աղյուսակը թույլ է տալիս անել հետևյալ եզրակացությունները.

1. Ֆրանսերենը ազատորեն գործադրում է համատեքստային փոխարինելիության միջոցները, որոշ դեպքերում դա խոսքին հաղորդում է լրացուցիչ ոճական երանգներ, այլ դեպքերում՝ խոսքը դառնում է հեշտ ընկալելի, առանց կրկնաբանությունների (երբ խոսքից բաց են թողնվում այնպիսի տարրեր, որոնք պարզ են համատեքստից):

2. Այդուսակը ցույց է տալիս, որ գործառույթային ոլորտի սահմանափակումը ֆրանսերենում վերաբերվում է ցուցայնական ոլորտում հողով և ցուցական անականով ստացականություն արտահայտելուն, որը կնշանակի ցուցական ածականի կիրառում իր հիմնական իմաստով և գործառույթով: Այս սահմանափակումը առկա է մասն հայերենում:
3. Հայերենի անորոշ հոդը, ունենալով անորոշ-մասնավորեցնող գործառույթ, չի կառող ազատ կիրառություն ունենալ ընդհանրացնող գործառույթով, բացառությամբ այն դեպքերի, երբ նախորդում է խնդիր-գոյականին:
4. Հարակրկնական ոլորտում հայերենի որոշյալ հոդը հաճախ չի պահպանում կապը նախընթաց հարաբերյալի հետ, որը կհանգեցներ նշողական (դեմոտատիվ) շփոթության: Այդ պատճառով, հայերենը ներմուծում է ցուցական դերանուն, սակայն որոշյալ հոդի կիրառումը այս ոլորտում ընդհանրապես չի բացառվում:
5. Հայերենի որոշյալ հոդի ստացական գործառույթը թուլացած է, և իր ստացական իմաստը արտահայտվում է համատեքստով նախանշված պայմաններում: -Ս, -դ, հոդերի արտահայտած ստացականությունը չի բխում համատեքստից: